ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ են հայ–պոնտական զորքերը գրավել Կապադովկիան.**

1) Ք. ա. 93 թ.
2) Ք. ա. 87 թ.
3) Ք. ա. 91 թ.
4) Ք. ա. 95 թ.

2 **Ո՞ր ժամանակահատվածում է ՀՅԴ–ն ՀԺԿ–ի հետ կազմել կոալիցիոն կառավարություն.**

1) 1919 թ. հունիս – 1920 թ. հունիս
2) 1919 թ. նոյեմբեր – 1920 թ. մայիս
3) 1919 թ. մայիս – 1919 թ. Դեկտեմբեր
4) 1918 թ. նոյեմբեր – 1919 թ. հունիս

3 **Ե՞րբ են հայկական ուժերը ադրբեջանցիներին Աղդամի մոտ պարտության մատնել.**

1) 1993 թ. հոկտեմբերի 24–ին
2) 1993 թ. հուլիսի 23–ին
3) 1994 թ. փետրվարի 18–ին
4) 1993 թ. ապրիլի 23–ին

4 **Ե՞րբ է հիմնադրվել Լազարյան ճեմարանը.**

1) 1837 թ.
2) 1810 թ.
3) 1815 թ.
4) 1824 թ.

5 **Ե՞րբ է գահակալել Տրդատ II –ը.**

1) 252–260 թթ.
2) 198–215 թթ.
3) 185–198 թթ.
4) 216–252 թթ.

6 **Ե՞րբ է Մկրտիչ Խրիմյանը դարձել Կ. Պոլսի հայոց պատրիարք.**

1) 1865 թ.
2) 1872 թ.
3) 1869 թ.
4) 1867 թ.

7 Ե՞րբ է ցուցադրվել հայկական կինեմատոգրաֆի առաջնեկ «Նամուսը».

1) 1928 թ.
2) 1931 թ
3) 1935 թ.
4) 1925 թ.

8 Ե՞րբ է գահակալել Խոսրով III Կոտակը.

1) 320–328 թթ.
2) 330–338 թթ.
3) 339–350 թթ.
4) 298–330 թթ.

9 Ո՞վ է հայ առաջին տպագրիչը.

1) Խաչատուր Կեսարացին
2) Հակոբ Մեղապարտը
3) Հովհաննես Քարմատանենցը
4) Աբգար դպիր Թոխաթեցին

10 Քանի՞ նահանգ ուներ Մեծ Հայքն ըստ «Աշխարհացույցի».

1) 20
2) 5
3) 37
4) 15

11 Ըստ հայկական ավանդության՝ ո՞ւմ անունից են առաջացել «արմեն» և «Արմենիա» անվանումները.

1) Արամանյակի
2) Արմենոսի
3) Արամայիսի
4) Արամի

12 Ո՞ւմ նախաձեռնությամբ է Փարիզում հրավիրվել Հայոց ազգային համագումարը.

1) Սեպուհի
2) Անդրանիկի
3) Պողոս Նուբարի
4) Դրոյի

13 **Ո՞ր բերդաքաղաքն էր իր նստավայրը դարձրել Աշոտ Մսակերը.**

1) Նկան
2) Արտագերս
3) Բագարան
4) Բագավան

14 **Ո՞ր ամրոցն է հիմնադրվել Ք. ա. 782 թ.**

1) Էրեբունի
2) Մենուախինիլի
3) Արգիշտիխինիլի
4) Թեյշեբաինի

15 **Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը ստորագրվեց՝**

1) Սևրում
2) Վերսալում
3) Սան Ռեմոյում
4) Մուդրոսում

16 **Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության պայմաններում Հարավային Հայաստանում իր անկախությունը պահպանել էր՝**

1) Կորդուքը
2) Տարոնը
3) Սասունը
4) Ապահունիքը

17 **Հայ բանաստեղծներից ո՞վ է այսպես բնութագրել Զեյթունի ապստամբությունը.**

«Հայկական քաջասրտության փառավոր ապացույց»:

1) Ս. Շահազիզ
2) Մ. Պեշիկթաշլյան
3) Ռ. Պատկանյան
4) Մ. Նալբանդյան

18 **Ո՞ր քաղաքի անունն է բաց թողնված մեջբերման մեջ.**

«Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ ..... պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»:

1) Սևաստոպոլ
2) Ստալինգրադ
3) Լենինգրադ
4) Մոսկվա

19 **Ինչպե՞ս էր կոչվում Հայաստանի առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը.**

1) Հայաստանի խորհուրդ
2) Ազգային խորհուրդ
3) նախարարների խորհուրդ
4) սահմանադիր ժողով

20 **1912 թ. հոկտեմբերին Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր՝**

1) Ժողովրդական կոմիսարների խորհուրդ
2) Հայոց ազգային կենտրոնական բյուրո
3) Արևմտահայ ազգային խորհուրդ
4) պատգամավորական Կենտրոնական ժողով

21 **Գավգամելայի ճակատամարտի արդյունքում՝**

1) Հայաստանն ընկավ Աքեմենյան տիրապետության տակ
2) Դարեհ III–ը գերեվարվեց և Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց
3) Մակեդոնացին նվաճեց Հայաստանը
4) վերականգնվեց Հայաստանի անկախությունը

22 **Ի՞նչ հետևանք ունեցավ Կիլիկյան Հայաստանում ունիթորների և հակաունի–թորների պայքարը.**

1) Ամրապնդեց թագավորական իշխանությունը:
2) Ամրապնդեց երկրում հոգևորականության դիրքերը:
3) Խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:
4) Նախադրյալներ ստեղծեց առաջադիմական ուժերի հաղթանակի համար:

23 **Թվարկված քաղաքական կուրսերը դասավորել ըստ դրանց գործադրման սկզբի ժամանակագրական հաջորդականության.**

ա. գյուղատնտեսության կոլեկտիվացում
բ. վերակառուցում
գ. արդյունաբերացում
դ. ռազմական կոմունիզմ

1) դ, բ, ա, գ
2) դ, գ, ա, բ
3) գ, ա, բ, դ
4) դ, ա, գ, բ

24 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հայկական կորպուսի կազմավորման սկիզբը
բ. Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
գ. Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը
դ. Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
ե. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմավորումը

1) բ, դ, ա, ե, գ
2) ե, բ, ա, դ, գ
3) գ, դ, ա, բ, ե
4) ե, բ, դ, ա, գ

25 **Կատարել համապատասխանեցում.**

Քաղաք	**Հիմնադիր արքա**
1) Մծուրք	ա. Վաղարշ II
2) Վաղարշապատ	բ. Տիգրան II
3) Բագարան	գ. Սանատրուկ
4) Տիգրանակերտ	դ. Երվանդ IV
	ե. Վաղարշ I

1) 1–ա, 2–ե, 3–դ, 4–բ
2) 1–գ, 2–ե, 3–բ, 4–ա
3) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
4) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ

26 **Ազատագրական խմբակի կամ կազմակերպության անունը համապատասխանեցնել դրա հետ առնչվող գործչին.**

1) «Հայրենասերների միություն»	ա. Կարապետ Նշկյան
2) «Բարենպատակ ընկերություն»	բ. Հակոբ Կալոյան
3) «Պաշտպան հայրենյաց»	գ. Արսեն Կրիտյան
4) «Միություն ի փրկություն»	դ. Կոստանդին Կամսարական
	ե. Ներսես Աբելյան

1) 1–ե, 2–գ, 3–ա, 4–բ
2) 1–դ, 2–բ, 3–ա, 4–ե
3) 1–ե, 2–ա, 3–դ, 4–բ
4) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ

27 **Խորհրդային ո՞ր հանրապետությունների ներկայացուցիչները ստորագրեցին ԽՍՀՄ–ի կազմավորման մասին փաստաթղթերը.**

1) Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի
2) Ռուսաստանի, Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի
3) Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Անդրդաշնության
4) Ռուսաստանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի

28 Ե՞րբ է Եսայի Հասան–Ջալալյանը դարձել Գանձասարի կաթողիկոս.

1) 1705 թ.
2) 1701 թ.
3) 1700 թ.
4) 1711 թ.

29 Ե՞րբ է տեղի ունեցել Ակռռիի ճակատամարտը.

1) 481 թ.
2) 483 թ.
3) 484 թ.
4) 482 թ.

30 Ո՞վ է հայ օպերային արվեստի հիմնադիրը.

1) Մ. Եկմալյանը
2) Տ. Չուխաճյանը
3) Ա. Տիգրանյանը
4) Գ. Սինանյանը

31 Ո՞վ է Բեռլինի կոնգրեսի նախօրյակին Լոնդոնում գլխավորել հայասիրական շրջանների աշխատանքները.

1) Դիզրայելին
2) Լլոյդ Ջորջը
3) Ջեյմս Բրայսը
4) Առնոլդ Թոյնբին

32 Տիգրան Մեծը հռոմեացի ո՞ր զորավարի ուղարկած դեսպանին է տվել հետևյալ պատասխանը.

«Ես Միհրդատին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա… հակահարված կտամ նրանց»:

1) Պոմպեոսի
2) Կրասոսի
3) Սուլլայի
4) Լուկուլլոսի

33 Ո՞վ է թևավոր դարձած այս խոսքերի հեղինակը.

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

1) Եղիշե
2) Խորենացի
3) Կորյուն
4) Փարպեցի

34 **Ո՞վ էր Տիրը հայկական դիցարանում.**

1) դպրության աստվածը
2) ռազմի աստվածը
3) արևի աստվածը
4) հյուրընկալության աստվածը

35 **Գտնել ճիշտ պատասխանը.**

«Նեմեսիս» ծրագիրը հայերի կողմից իրականացվեց, որովհետև՝

1) թուրքական դատարանը արդարացրեց երիտթուրք պարագլուխներին:
2) երիտթուրք հանցագործների Թուրքիայից դուրս գտնվելու պատճառով հնարավոր չեղավ իրականացնել նրանց վերաբերյալ թուրքական դատարանի կայացրած վճիռները:
3) 1919 թ. հունվարին հիմնված ռազմական ատյանները չէին ցանկանում ապացույցներ հավաքել:
4) դաշնակից տերությունները չէին ճանաչում երիտթուրք կառավարության ղեկավարների մեղավորությունը ցեղասպանության մեջ:

36 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Քթիշ ամրոցի հերոսական դիմադրությունն արաբներին
բ. Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու գլխավորությամբ արաբների վտարումը Տարոնից
գ. Հովնան Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունիների գերեվարությունը
դ. պարտված Բուղայի հեռանալը Հայաստանից
ե. Բուղայի գլխավորած արաբական զորաբանակի ներխուժումը Հայաստան
զ. Բուղայի պարտությունը Գուրգեն Արծրունուց և փախուստը Վասպուրականից

1) ե, բ, գ, դ, ա, զ
2) ե, բ, գ, զ, դ, ա
3) բ, ե, գ, զ, ա, դ
4) բ, ե, գ, դ, ա, զ

37 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սարդուրի III–ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
բ. Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում
գ. Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
դ. «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը

1) գ, դ, ա, բ
2) բ, գ, դ, ա
3) դ, բ, ա, գ
4) բ, դ, գ, ա

38 **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոններին.**

1) Պաղտին
2) Ատան
3) Կոստանդին Հեթումյան
4) Ապլղարիպ Արծրունի
5) Պողոս Սսեցի

ա. գունդստաբլ
բ. կաթողիկոս
գ. ստրատեգոս
դ. մարաջախտ
ե. պայլ
զ. կյուրապաղատ

1) 1–դ, 2–ե, 3–ա, 4–գ, 5–բ
2) 1–զ, 2–գ, 3–բ, 4–դ, 5–ե
3) 1–բ, 2–զ, 3–դ, 4–ա, 5–գ
4) 1–ե, 2–դ, 3–գ, 4–զ, 5–ա

39 **Ի՞նչ անուններ էր կրում 867 թ. Բյուզանդիայում գահ բարձրացած արքայատոհմը.**

1) Հայկյան
2) Հայկական
3) Բագրատունյաց
4) Մակեդոնական
5) Արշակունյաց

40 **1930–ական թթ. ի՞նչ պատճառներով ընդհատվեցին Սփյուռքի հետ առանց այն էլ սահմանափակ հարաբերությունները.**

1) Խորհրդային Հայաստանում Հայկական ազգային կոմիտեի գործունեության արգելման
2) խորհրդային երկրում ծավալված բռնաճնշումների
3) Հայաստանում քաղաքական կուսակցությունների լուծարման
4) Հայկական համաշխարհային կոնգրեսի հետ հարաբերությունների վատթարացման
5) Հայաստանում ՀՕԿ–ի ու ՀԲԸՄ–ի գործունեության արգելման

41 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) 1894 թ. «Դրոշակում» տպագրվել է ՀՅԴ ծրագիրը:
2) «Դրոշակ» թռուցիկ թերթի անդրանիկ համարում հրապարակած հոչակագրով դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրությունն ազդարարել է իր գլխավոր խնդիրը:
3) 1892 թ. Երևանում տեղի է ունեցել ՀՅԴ առաջին համագումարը:
4) Նորաստեղծ «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության կորիզը Քրիստափոր Միքայելյանի գլխավորած «Դրոշակ» խմբավորումն է եղել:
5) 1891 թ. սկզբին կնքված համաձայնագրով Արմենական կուսակցությունը միացել է ՀՅԴ–ին:

42 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Պարթևստանում Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը
2) Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
3) Արեգ–Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
4) Հայ հայրենասերների դիմադրությունը Կորբուլոնի զորքերին Տարոն գավառում
5) հայոց Բակուր Արշակունուն գահընկեց անելը և Հռոմ տանելը
6) հույն մատենագիր Հիպպոլիտոսի «Ժամանակագրության» գրվելը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) հայ ապստամբների դիմումը պարսից Խոսրով Անուշիրվան արքային և նրա կողմից Բյուզանդիային պատերազմ հայտարարելը
2) Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի գումարումը
3) Հուստինիանոս I–ի գահակալության սկիզբը
4) Վարդան Կրտսերի գլխավորած ապստամբության սկիզբը
5) Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև «հավիտենական» հաշտության կնքումը

44 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Գրիգոր Եղիազարյան
բ. Նիկողայոս Բունիաթյան
գ. Հրաչյա Աճառյան
դ. Աշոտ Հովհաննիսյան
ե. Շարա Տալյան

1) կոմպոզիտոր
2) երգիչ
3) ճարտարապետ
4) դերասան
5) պատմաբան
6) լեզվաբան

ա	
բ	
գ	
դ	
ե	

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Երվանդ Սակավակյացի օրոք Հայոց թագավորության սահմանները հյուսիս–արևմուտքում հասնում էին Սև ծով, հյուսիս–արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Մեդիա, հարավում՝ Հյուսիսային Միջագետք:
2) Տիգրան Երվանդյանի դաշնակիցը մարերի դեմ պայքարում պարսից արքա Կյուրոս II Մեծն էր:
3) Տիգրան Երվանդյանը վճռական պայքարում սպանել է Մարաստանի արքա Աժդահակին:
4) Հայկազունների վերականգնված իշխանությունը Հայկական լեռնաշխարհի հարավ–արևելքում էր և համապատասխանում է սեպագիր աղբյուրներում հիշատակվող Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:
5) Հայկազունների տոհմի իշխանությունը Սկայորդու գլխավորությամբ վերականգնվել է Ք. ա. VII դ. վերջին:
6) Պարույր նահապետը Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն գրավելուց հետո թագադրվեց Մարաստանի արքայի կողմից և ճանաչվեց Հայաստանի թագավոր:

Բ մակարդակ

46 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) գահնամակ
2) ոստանիկ այրուձի
3) հայրենիք
4) աշխարհազոր
5) պարգևականք
6) ռոճիկ

ա. պատերազմի ժամանակ քաղաքացիներից ու գյուղացիներից հավաքագրված զորք
բ. ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողեր
գ. դրամական և բնամթերք նպաստ
դ. արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված զորամաս
ե. պայմանական հողատիրություն
զ. երկրի միացյալ ռազմական ուժերը
է. փաստաթուղթ, որը սահմանում էր հայ նախարարների կարգը՝ ըստ զբաղեցրած պաշտոնական դիրքի, հզորության և զորաքանակի

1) 1–դ, 2–ա, 3–գ, 4–բ, 5–զ, 6–ե
2) 1–է, 2–դ, 3–բ, 4–ա, 5–ե, 6–գ
3) 1–գ, 2–է, 3–դ, 4–զ, 5–ա, 6–բ
4) 1–դ, 2–գ, 3–ա, 4–ե, 5–բ, 6–զ

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը, ըստ Ազգային սահմանադրության, կոչվում էր Ազգային ժողով:
բ. Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
գ. Ռուսաստանում 1844 թ. ստեղծված վարչական մեծ միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
դ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում միջազգային հարաբերությունների կիզակետում հայտնված հիմնախնդիրը հայտնի է Հայկական հարց անունով:
ե. Հովսեփ Արղությանի ղեկավարած մարմինը կոչվում էր Կ. Պոլսի Ազգային բյուրոյի գործադիր կոմիտե:
զ. Կովկասյան ճակատում գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ կռվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
է. 1846 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը Երևանի նահանգն էր:

1) ա, գ, ե
2) գ, դ, զ
3) ա, դ, է
4) բ, ե, է

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են սխալ.**

ա. 1826–1828 թթ. պատերազմի արդյունքում ձևավորվեց Հայկական մարզը:
բ. Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց Բեսարաբիան:
գ. Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը ձեռք բերեց Կարսը, Կաղզվանը, Օլթին, Արդահանը:
դ. 1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Ռուսաստանը տեր դարձավ մերձկասպյան տարածքներին:
ե. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում ձևավորվեց Էրզրումի մարզը:
զ. Թուրքմենչայի պայմանագրի համաձայն՝ հազարավոր հայեր վերաբնակվեցին Արևելյան Հայաստանում:
է. Բրեստ–Լիտովսկի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը կորցրեց նաև Կարսը և Բաթումը:
ը. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Անապան, Փոթին և Ղարաբաղը:

1) բ, գ, ը
2) ա, դ, զ
3) ա, դ, է
4) բ, ե, ը

49 **Թվարկվածներից որո՞նք են 1919 թ. հունվարի հայ–վրացական հաշտության կոնֆերանսի արդյունքներից.**

ա. Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»:
բ. «Լոռու չեզոք գոտու» մեջ մտան Բորչալուի գավառի Ալավերդու (Թումանյան), Ուզունլարի (Օձուն) և Ախալքալաքի շրջանները:
գ. «Չեզոք գոտում» սահմանվեց հատուկ կառավարում՝ Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ:
դ. «Լոռու չեզոք գոտու» ընդհանուր վերահսկողությունը դրվեց ամերիկացի գեներալ–նահանգապետի վրա:
ե. Վորոնցովկայի շրջանը համարվեց վիճելի տարածք:
զ. «Չեզոք գոտում» տեղակայվեցին խաղաղապահ զորքեր:
է. Ջավախքը փաստացի մնաց Վրաստանի հսկողության ներքո:

1) բ, դ, է
2) ա, դ, ե
3) ա, գ, է
4) գ, ե, զ

50 **1894–1896 թթ. ազատագրական պայքարի իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Շենիկի գյուղապետ Գրգոյի տանը ինքնապաշտպանական ժողովի գումարումը
բ. Զեյթունի ապստամբների՝ «Զեյթունի անկախ իշխանություն» վերտառությամբ կարմիր դրոշ բարձրացնելը թուրքական զորանոցի վրա
գ. Զեքի փաշայի գլխավորած զորքի շարժվելը դեպի Սասուն
դ. մեծ տերությունների միջամտությամբ Հալեպի հաշտության կնքումը
ե. Կարապետ Բասիլոսյանի կոչը Զեյթունի լեռնականներին
զ. թուրքական կանոնավոր զորքի ու քրդական մազրիկ ցեղի հրոսակների հարձակումը 1500 վանեցիների վրա՝ Ս. Բարդուղիմեոս վանքից ոչ հեռու
է. Բաբը Ալիի ցույցը
ը. Վանում բոլոր ուժերի միասնական ճակատի կազմումը՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ

1) ը
2) գ
3) դ
4) ա

51 **Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արտավազդ II
բ. Տիգրան IV և Էրատո
գ. Արտաշես II
դ. Տիգրան I
ե. Արտաշես I
զ. Արտավազդ III
է. Տիգրան II
ը. Տիգրան IV
թ. Արտավազդ I
ժ. Տիգրան III

1) ե, դ, թ, է, ա, գ, ժ, ը, բ, զ
2) թ, ե, դ, է, գ, ա, ը, զ, ժ, բ
3) թ, ե, դ, է, ա, ժ, գ, ը, բ, զ
4) ե, թ, դ, է, ա, գ, ժ, ը, զ, բ

52 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գետաշենի հերոսական ինքնապաշտպանության ավարտը և շրջանի հայաթափումը
բ. Սպիտակի աղետալի երկրաշարժը
գ. Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու՝ արցախցիների ստորագրությամբ պահանջագրի ուղարկումը Մոսկվա
դ. «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամների կալանավորումը և տեղափոխումը Մոսկվա
ե. Բաքվի հայության կոտորածները և տեղահանությունը
զ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը, որտեղ մերժվեց ԼՂԻՄ–ը Խորհրդային Հայաստանին միացնելու արցախահայության արդարացի պահանջը
է. Խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին ժողովրդավարական և այլընտրանքային ընտրությունները
ը. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի կողմից ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20–ի որոշմանը համաձայնություն տալը
թ. «Օղակ» գործողության իրականացման սկիզբը Հյուսիսային Արցախում
ժ. «Ղարաբաղ» կոմիտեի համալրումը նոր անդամներով

1) գ, ժ, ը, զ, բ, դ, ե, է, թ, ա
2) ժ, գ, ը, զ, բ, դ, ե, է, թ, ա
3) ժ, բ, դ, ե, է, գ, ը, ա, զ, թ
4) գ, ժ, դ, ե, է, ա, զ, բ, ը, թ

53 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Սյունիքի թագավորության հիմնադրումը
բ. Անիի թագավորության անկումը
գ. Գագիկ II–ի մեկնումը Կոստանդնուպոլիս
դ. Հովհաննես–Սմբատի և Աշոտի մահը
ե. Տարոնի իշխանության միացումը Բյուզանդիային
զ. Տրապիզոնի բյուզանդա–վրացական բանակցությունները
է. Տայքի միացվելը Բյուզանդիային
ը. Տաշիր–Զորագետի թագավորության հիմնադրումը

1) 987 թ.
2) 978 թ.
3) 1001 թ.
4) 1045 թ.
5) 1022 թ.
6) 1044 թ.
7) 1041 թ.
8) 966 թ.
9) 963 թ.

1) ա–1, բ–3, գ–7, դ–6, ե–4, զ–5, է–2, ը–9
2) ա–1, բ–4, գ–6, դ–7, ե–8, զ–5, է–3, ը–2
3) ա–4, բ–9, գ–8, դ–7, ե–6, զ–1, է–2, ը–3
4) ա–9, բ–8, գ–1, դ–2, ե–6, զ–4, է–7, ը–5

54 **Առանձնացնել այն երեք պայմանները, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Գոդերձ II–ի միջև կնքված հայ–պարթևական հաշտության պայմանագրում.**

ա. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Ատրպատականի վրա, որի տարածքը ստանալու էր Հայաստանը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Պարթևստանը:
բ. Օսրոյենեն, Ադիաբենեն և Միգդոնիան հետ ստանալու դիմաց Պարթևստանը ճանաչում էր Տիգրան Մեծի գերիշխանությունը:
գ. Պարթևստանը վերադարձնում էր Հայաստանից խլած Յոթանասուն հովիտները:
դ. Պարթևների արքան կորցնում էր «արքայից արքա» տիտղոսը, որն այնուհետև կրելու էին Տիգրանն ու իր հաջորդները:
ե. Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը խոստանում էր օգնական ուժեր տրամադրել Գոդերձ II–ին:
զ. Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվում էին Հյուսիսային Միջագետքից և Մարաստանից:
է. Հօգուտ Պարթևստանի՝ Հայաստանը հրաժարվում էր Մարաստանից և Ատրպատականից:

1) գ, դ, ե
2) բ, ե, է
3) ա, գ, զ
4) գ, դ, զ

55 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Հայ ժողովուրդը VIII–IX դարերում բազմիցս ապստամբել է օտար լծի դեմ:
բ. Հայ նախարարական համակարգը, չնայած խալիֆայության դաժան բռնություններին, պահպանվել էր. դրա հողատիրական հիմքը կազմում էին Բագրատունյաց, Սյունյաց, Մամիկոնյանների և Արծրունիների իշխանական տիրույթները:
գ. Հայ եկեղեցին արաբական տիրապետության շրջանում շարունակում էր իր ազգապահպան գործունեությունը:
դ. Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությանը և կրոնական հալածանքներին հայերը պատասխանեցին ապստամբությամբ, որը գլխավորեց Աշոտ իշխանի որդին՝ Գագիկ Բագրատունին:
ե. Դավիթ Սահառունին մինչև VII դարի 40–ական թթ. վերջը գլխավորում էր Հայաստանի վերամիավորման գործը:
զ. Սասուն–Խութ գավառում տեղի ունեցած հուժկու ապստամբությունը ղեկավարում էր Աշոտ Մսակերը:
է. Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արճեշի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղի գլխավորությամբ շարժվեցին դեպի Բագրևանդ գավառ:

1) ա, բ, դ
2) դ, ե, զ
3) դ, ե, է
4) գ, զ, է

56 **Ընտրել այն երեք պատճառները, որոնք նպաստեցին XII դարի վերջին Կիլիկյան Հայաստանի համար բարենպաստ միջազգային իրադրության ստեղծմանը.**

ա. Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել էր Կիլիկիայից:
բ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր միջազգային առևտրի ամենախոշոր կենտրոնը Մերձավոր Արևելքում:
գ. Խաչակիրների պետությունները դադարել էին գոյություն ունենալուց Արևելքում:
դ. Եգիպտոսի սուլթանությունը որոշ ժամանակ զբաղված էր խաչակրաց տիրույթների նվաճումով:
ե. Կիլիկյան Հայաստանը ռազմաքաղաքական դաշինք էր հաստատել Վենետիկի և Ջենովայի հետ:
զ. Իկոնիայի սուլթանությունը պատրաստվում էր դիմագրավելու խաչակրաց երրորդ արշավանքին:
է. Ամրապնդվել էր դաշինքը մոնղոլների հետ:

1) բ, դ, ե
2) ա, գ, է
3) ա, դ, զ
4) բ, ե, զ

57 **Կատարել համապատասխանեցում.**

Թվաքանակ	**Փաստ**
1) ավելի քան 60000	ա. ամբողջ Անդրկովկասից 1949 թ. աքսորված հայեր
2) 108	բ. Երևանի հանրահավաքում ցուցարարների թիվը 1988 թ. փետրվարի 25–26–ին
3) մոտ 3000	գ. հայկական ազգային դիվիզիաների շարքերում Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայորդիներ
4) մոտ 15500	դ. Սպիտակի երկրաշարժից հետո անօթևան մնացածներ
5) ավելի քան 100000	ե. Հայաստանում 1945–1952 թթ. քաղաքական մեղադրանքով բռնադատվածներ
6) 515000	զ. Հայաստանում 1950–1970–ական թթ. հակախորհրդային գործունեության համար դատապարտվածներ
	է. պատերազմի տարիներին գործած սխրանքների համար ԽՍՀՄ հերոսի կոչման արժանացած հայորդիներ

1) 1–գ, 2–է, 3–ե, 4–ա, 5–բ, 6–դ
2) 1–գ, 2–է, 3–ե, 4–զ, 5–ա, 6–դ
3) 1–բ, 2–ե, 3–զ, 4–ա, 5–դ, 6–գ
4) 1–բ, 2–է, 3–դ, 4–ա, 5–գ, 6–զ

58 **Բերված փաստերից ընտրել երեքը, որոնք տեղ են գտել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքում.**

ա. Ներկայացված է ապագա պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու:
բ. Ներկայացված է խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր:
գ. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն գործադիր իշխանության կառուցվածքը:
դ. Ներկայացված են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա աշխարհագրական լայնարձակ սահմանները:
ե. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն օրենսդիր իշխանության կառուցվածքը:
զ. Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության:
է. Քննադատվում է միապետական կարգը՝ այն համարելով հայոց պետակա–նության անկման պատճառներից մեկը:

1) գ, դ, ե
2) դ, զ, է
3) բ, զ, է
4) ա, գ, ե

59 **Թվարկվածներից որո՞նք տեղ չեն գտել 1919 թ. փետրվարին Փարիզում ստորագրված հայկական պահանջների համատեղ հուշագրում.**

ա. Ճանաչել միացյալ հայկական անկախ պետությունը
բ. Պատժի ենթարկել հայկական ջարդերի կազմակերպիչներին
գ. Արևմտյան Հայաստանի վիլայեթներից կազմել երկու նահանգներ՝ քրիստոնյա կառավարիչներով
դ. Միացյալ Հայաստանի կազմի մեջ ներառել Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Էրզրում և Տրապիզոն), Կիլիկիայի 4 սանջակները, ինչպես նաև ՀՀ–ն իր ընդլայնված սահմաններով
ե. Հայաստանի հովանավորության մանդատը 20 տարով հանձնել դաշնակից պետություններից մեկին
զ. Թուրքիային ազատել հայերին պատճառած վնասների փոխհատուցումից
է. Ադրբեջանին զիջել Ղարաբաղը և Նախիջևանը

1) ա, բ, ե
2) դ, ե, զ
3) գ, զ, է
4) գ, դ, է

60 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայաստանի միավորված ազգային կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի դարձավ Ամերկոմ անունով:
2) Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
3) Խորհրդարանի 1918 թ. սեպտեմբերին ընդունած օրենքը կոչվում էր «Դպրոցի կատարելագործման մասին»:
4) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարություն–ները կոչվել են զեմլյաներ:
5) Սոցիալ–դեմոկրատներին կարճ անվանում էին էսէռներ:
6) Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունված օրենքով ստեղծված արդարադատության մարմին էր երդվյալ ատենակալների դատարանը:
7) ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոյի կողմից ստեղծված մարմինը կոչվում էր «Քարոզչության և գործողության խորհուրդ»:
8) Զանգեզուրի հայկական ազգային խորհուրդը 1919 թ. սկզբին վերակազմվեց և կոչվեց Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ:

61 **Գտնել ճիշտ պատասխանները.**

1830 թ. զանգվածային վերաբնակեցման հետևանքներ են՝

1) 45 000 հայերի տեղափոխվելը Արևելյան Հայաստան
2) Ախալքալաքում և Ախալցխայում հայ բնակչության տեսակարար կշռի շեշտակի աճը, նախորդ ժամանակներին բնորոշ ժողովրդագրական իրավիճակի վերականգնումը,
3) Մուշ և Վան քաղաքների զրկվելը մեծ թվով հայ առևտրականներից ու արհես–տավորներից, որոնք կարևոր տեղ ունեին Օսմանյան կայսրության տնտե–սության մեջ
4) բայազետցիների և ալաշկերտցիների հաստատվելը Սևանա լճի ավազանում
5) էրզրումցիների հաստատվելը Սուրմալուում, Դարաչիչակում, Ապարանում և Փամբակում
6) 75 000 արևմտահայերի վերաբնակվելը ռուսական տերությանն անցած տարածքներում
7) կարսեցիների հաստատվելը Գյումրիում, Շիրակի դաշտում և Ապարանում

62 **Թվարկվածներից որո՞նք մոնղոլական տիրապետության հաստատման հետևանքներից չեն.**

1) Վերսկսվեց բնակչության արտագաղթը:
2) Մոնղոլները բոլոր հպատակ ժողովուրդներին սկզբից ևեթ պարտադրեցին մահմեդականություն ընդունել:
3) Նվաճված երկրների բնակչությունը տուժում էր ծանր հարկերից:
4) Լինելով քոչվոր անասնապահներ՝ մոնղոլները դաշտավայրերը և հատկապես քաղաքները սկսեցին վերածել արոտավայրերի:
5) Ասորիքն ու Եգիպտոսը նվաճելուց հետո մոնղոլներին անցավ ողջ միջերկրա–ծովյան առևտրի վերահսկողությունը:
6) Հպատակ ժողովուրդները պարտավոր էին կազմել զինական ջոկատներ, որոնց ուղարկում էին ամենավտանգավոր ճակատները կռվելու:
7) Մոնղոլները խոչընդոտում էին միջազգային առևտրի զարգացումը:

63 **Ընտրել ճիշտ փաստարկները.**

1) Մեծ Հայքի տարածքը մոտ 400 հազար քառ. կմ է:
2) Վանա լիճը ծովի մակերևույթից ունի 1720 մ բարձրություն և չորս կղզի, որոնցից ամենանշանավորն Աղթամարն է:
3) Կապուտան կամ Ուրմիա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1916 մետր:
4) ՀՀ–ի՝ բարձրությամբ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղն ունի 3925 մ բարձրություն:
5) Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը Մասիսն է (Մեծ Արարատ), որն ունի 5165 մ բարձրություն:
6) Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվում է Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը սկիզբ է առնում Արարատից:
7) Եփրատի երկու ճյուղերը միախառնվում են Ակն քաղաքի մոտ:
8) Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթը Սիփանն է, որը գտնվում է Վանա լճից հյուսիս և ունի 4096 մ բարձրություն:

64 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Հայկական դպրոցներ բացելու առաքելությունը երկրի արևմտյան մասում Մաշտոցն իրականացնում է 415–419 թթ.:
2) Մեսրոպ Մաշտոցը՝ հայ դպրության հիմնադիրը, գրել է հոգևոր ճառեր, երգեր, հատկապես շարականներ:
3) Մեսրոպ Մաշտոցը տառեր է ստեղծել նաև վրաց և Արաքսի ձախափնյա բուն Աղվանքի ցեղերից մազքութների համար:
4) Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը անվանվել է Աստվածաշունչ:
5) Հայրենիք վերադարձող Մեսրոպ Մաշտոցին Արաքսի ափին մեծ հանդիսավորությամբ դիմավորել են Վռամշապուհ արքան, Սահակ Պարթև կաթողիկոսը, նախարարագունդ ավագանին՝ ժողովրդի բազմության հետ:
6) Սահակ Պարթևի նամակով Մաշտոցը ներկայանում է բյուզանդական կայսր Թեոդոսիոս III–ին, ստանում է նրա համաձայնությունը Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու համար:
7) Առաջին բարձրագույն դպրոցը՝ վարդապետարանը, հիմնադրվել է Վաղարշապատում:

65 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցումը ԽՍՀՄ կառավարության կողմից
2) ՄԱԿ–ում Կիպրոսի արտգործնախարար Կիպրիանուի կոչ անելը՝ քննարկելու Հայկական հարցը
3) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ստեղծումը
4) Երևանի Լենինի հրապարակի (Հանրապետության հրապարակի) ճարտարապետական համալիրի կառուցման ավարտը
5) գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
6) «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
7) Հայաստանի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման
8) ԱՊՀ–ի ստեղծումը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ՀՅԴ–ի կողմից երիտթուրքերի հետ հարաբերությունների խզումը
2) «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ստեղծումը
3) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
4) Երիտթուրքերի հեղաշրջումը
5) Ադանայի նահանգում 30 000 հայերի կոտորածը
6) Անդրեյ Մանդելշտամի կողմից հայկական բարենորոգումների նախագծի կազմումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Դվին քաղաքի բարեկարգումը և արքունի ապարանքի կառուցումը
2) Շապուհ II Երկարակյացի գահ բարձրանալը
3) Գրիգոր Լուսավորչին եպիսկոպոսապետ կարգելը
4) Մայր տաճար Ս. Էջմիածնի կառուցումը
5) Հռիփսիմյան քույրերի փախուստը Հայաստան
6) հայոց Աբգար թագավորի գահակալումը

68 **Կատարել համապատասխանեցում.**

Մականուն

ա. Մեծն Մուրադ
բ. Փարամազ
գ. Իշխան
դ. Ռոստոմ
ե. Կոմս
զ. Գարուն Աղասի

Անուն

1) Մատթեոս Սարգսյան
2) Ստեփան Զորյան
3) Ավետիս Նազարբեկյան
4) Հովսեփ Արղության
5) Վահան Փափազյան
6) Համբարձում Պոյաճյան
7) Կարապետ Թուր–Սարգսյան

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69 **Երկիրը համապատասխանեցնել գահակալի անվանը.**

ա. Սարգոն II
բ. Օրոդես II
գ. Կարանի
դ. Երվանդ III
ե. Միհրդատ VI Եվպատոր
զ. Ներոն

1) Պոնտոս
2) Մեծ Հայք
3) Ասորեստան
4) Հայասա
5) Կապադովկիա
6) Հռոմեական կայսրություն
7) Պարթևստան

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Լոզանի կոնֆերանսը, քննարկելով Հայկական հարցը, մոռացության է տվել Սևրի պայմանագիրը:
2) Նէպը Խորհրդային Հայաստանում գործադրվել է Փետրվարյան համաժողովրդա–կան ապստամբության ավարտից հետո:
3) Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով ոտնահարվել են հայ ժողովրդի պատ–մական իրավունքները, և հայկական տարածքները նվիրաբերվել են Թուրքիային և Ադրբեջանին:
4) ՀՍԽՀ Ժողկոմխորհի առաջին նախագահ է նշանակվել Ալեքսանդր Մյասնիկյանը:
5) «Աջերի», տրոցկիստական ընդդիմության ջախջախումից հետո ՀամԿ(բ)Կ ստալինյան ղեկավարությունը խորհրդային երկրում հաստատել էր իր բացարձակ իշխանությունը:
6) Խորհրդային երկրում սկսել էր ձևավորվել Ստալինի անձի պաշտամունքը, որը բացահայտ է դարձել նրա ծննդյան 50–ամյակի (1929 թ.) նշումից հետո: